անորոշ մի Սոլվայք նրան նշան էր արել եւ բլուրի ետեւ իջնող արեւի հետ երգել:

Գեղամը ապրում էր մեղմ սքանչացումի մէջ, լուռորէն երազուն:

Նա սիրում էր արուեստը մեծ երկիւղածութեամբ, մտքի ազնուականութեան յատուկ սրբութեամբ, ինչպէս անկեղծ վանականները սիրում են մաղօննայի յիշատակը եւ թախանձագին պաշտում նրա ներշնչումը:

Նրա շարժուձեւի մէջ զսպուած, ժուժկալ մի բան կար, վերին աստիճանի համակրելի եւ, ներքին, ամփոփուած բարոյականը բնորոշող:

Ինչպէս իսկական բոլոր բանաստեղծները, նա արուեստը համարում էր նախախնամական մի լուծ, մեծ վիշտ եւ զրկանք, անէծք: Ուստի եւ զայրանում էր, ատում էր խորապէս նրանց, որոնք չնացումի գիտակից սրբապղծութեամբ գրականութեան մօտենում էին թեթեւօրէն, լրբացած, «մարմնեղումի» փողոցային սուլոցով:

Փարիզի իր թշուառ այցելութիւնից նա բերել էր Լիւքսէմբուրգի պարտէզի աշնանային տերեւաթափի տրտմութիւնը, Վերլէնի սրսփուն տողերի հմայքը, Բոդլերի, դժբախտ այդ ազնուականի, երգի դաժանութիւնը եւ նոր բանաստեղծութեան անզուսպ թեւաւորումի ոսկէ յիշատակը:

Գեղամի աղքատութեան մէջ ազնուական թափթփածութեան կար: Ոսկեայ ակնոցներ, սեւ զգեստ, չարչարուած կօշիկների վրայ հինցած գէտրներ: Սէրը դէպի սրճարանը, ուր կարելի է գրականութիւնից խօսել: Ատելութիւնը դէպի Բուրժուան, փարիսեցիները եւ միակողմանի կուսակցականը: Լաւ ծիծաղ ունէր՝ բարի եւ պոռոտկուն: Հաւատաւորի միամտութիւն եւ անկեղծութիւն:

Զսպում էր թափը: Իր երկիւղածութիւնը դէպի արուեստը այնքա՞ն մեծ էր, որ չէր յանդգնում գրել, ինչպէս կարող էր: Միշտ պատրաստում էր: Մեծ էր տեսնում եւ լայն էր երեւակայում. վախում էր:

«Մեհեանի» բոլոր սրբագրութիւնները նա էր անում եւ ի՞նչպիսի սիրով: Ցօղուածների չուրջը վիճաբանում, տպարան վազում, նորանոր ոգեւորութիւնների աղբիւրներ ստեղծում: Հաւատում էր: Անթիւ թշնամիների դէմ պայքարելու ժամանակ շարքերում տեղ էր բռնում. իմաց էր տալիս հակառակորդների ծածուկ քայլերի մասին, կեղծ բարեկամների ոտնձգութիւնների մասին:

Հաւատում էր:

Գաւառի բանիմաց երիտասարդութիւնը մեզ հետ էր: Հեռաւոր քաղաքներում մեր գաղափարների շուրջը կռիւներ էին տեղի ունենում: Բթամիտ տեսուչներ որոշ դպրոցներում արգիլած էին մեր թերթը: Ցայտնի գրականագէտներ երկիւղով էին նայում մեզ, խորապէս ատում էին եւ չէին համարձակւում արտայայտուել: Ցաղթութիւնը մօտ էր:

Մօտ էր:

Գեղամ Բարսեղեանը իր ոսկեայ ակնոցներով եւ կեղտոտ գէտրներով անապատների կիզիչ աւազների վրայ քայլեց եւ ո՞վ գիտէ ինչ դաժան մահով մեռաւ:

Եւ երբեք չմօտեցաւ իր երազած Սոլվայքին, որը նրան նշան էր արել եւ բլուրի ետեւ իջնող արեւի հետ երգել:

* * *

Այսօր, նորից փորձեր ենք անում: Մոխիրների տակից հայ ոգու չմարած ածուխների կտորներ ենք ժողովում: Աղքատ գիւղացի կանանց նման հնձուած ցորենի դաշտից՝ նիհար հասկեր ենք որոնում:

«Բարձրավանք» — ինքնամփոփումի փորձ: Այրուող անտառի մէջ՝ դիտարան: Նայում ենք:

Մարած հրդեհի փլատակների տակ ջրակոյտներ են մնացել և գորտեր են ծնուել: Փոքրամիտ դրչակներ, լաւագոյնների մահից յետոյ, այլեւս անզուսպորէն լրբացած, Ստամբուլից մինչեւ Պերա, ոռնում են: Դեռ դիակի հոտ է գալիս: Վարնոց սրճարաններից, հարբած մարդիկ, դուրս են փսխում, այլեւս անապագայ այս աշխարհը:

Ամէն ինչ մեռնում է:

* * *

Ասում են Անատոլիում յոյների եւ թրքերի միջեւ կատաղի կռիւներ են տեղի ունենում:

Ցոյները յաղթում են:

* * *

«Արուեստի Տունը» ներքին վէճերով է զբաղուած:

Ց. Թումանեանի թէյասեղանի արդիւն-

Հայ մատենագրութեան թուանշանային գրադարան